

ՕՐԵՆԵ՝ ԱՈՒԱՑ ՕՐԵՆՍԴԻՐՆԵՐԻ

Վերջապես կատարվեց այն, ինչը վաղ թե ուշ պիտի լիներ. հայտնվեց դեմոկրատ, որը խոստովանեց անվիճելի. դեմոկրատիան բանի պետք չի: Խոսքս «Յայկական ժամանակ»-ի հունվարի 24-ի համարում տպագրված «Ժողովրդավարություն՝ առանց ժողովրդավարների» հոդվածին է վերաբերում: Իհարկե, այդ հոդվածում, որի հեղինակը ո՛չ ավել, ո՛չ պակաս Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի անդամ է՝ ոմն Ռալֆ Դարենդորֆ, նման բառեր չէք գտնի, սակայն ընդհանուր իմաստն այդ է, ինչը պարզորոշ երեւում է վերնագրից, որը մի էժանագին բառախաղ է: Յեղիականը արիություն չի ունեցել իրերն իրենց անուններով կոչել, սակայն պարզ է, որ ժողովրդավարության կրողները ժողովրդավարներն են (հո միապետականները չեն), ուրեմն դրանցից հրաժարվելը վկայում է ժողովրդավարական գաղափարի ինչ-որ սկզբունքային սխալի գոյությունը: Եւ իրոք, ինչո՞ւ անհրաժեշտ եղավ ժողովրդավարությունից «հեռացնել» ժողովրդավարներին: Բացատրությունը կարելի է ձեւակերպվել հարցի ձեւով. *ինչպե՞ս պիտի վարվեն ժողովրդավարության կողմնակիցները, եթե ժողովուրդը որոշի, որ իրեն ժողովրդավարություն պետք չէ:*

Յեղիական այդ հարցը քիչ այլ կերպ է ձեւակերպում. իսկ եթե, ասում է, **«նախկին իշխանությունը հավատում է ժողովրդավարությանը, իսկ նորը՝ ո՛չ: Իսկ եթե հանկարծ ընտրվել են «ոչ այն մարդիկ»»** (ուշադրություն դարձրեք այդ «հավատում է»-ին)». այդ մասին դեռ կխոսենք): Այդ դեպքում, ինչպես ճիշտ նկատում է հոդվածագիրը, կա երկու տարբերակ. կամ ինչ-որ ուժ պիտի որոշի, որ ընտրվածները անընդունելի են, եւ չեղյալ հայտարարի նրանց հաղթանակը, ինչն, անշուշտ, կարող է հանգեցնել արյունահեղության, կամ էլ նրանց պիտի հնարավորություն տրվի կառավարել, որպեսզի ե՛ւ իրենք, ե՛ւ իրենց ընտրողները հասկանան, դրանց ոչ պիտանիությունը: Սակայն, որպես երկրորդ տարբերակի օրինակ նա հիշում է Յիսուսի օրինակը. երբ պարզ դարձավ, թե ով ով է, արդեն ուշ էր: Ի՞նչ է ստացվում: Ստացվում է ժողովրդավարությունը չի կարող փրկել դրությունը, եթե իշխանության գալիս են «ոչ այն մարդիկ». երկու դեպքում էլ վերջն արյունահեղությունն է: Ուրեմն «ի՞նչ անել»: Պատասխանն ակնհայտ է. հրաժարվել ժողովրդավարությունից: Բայց չէ՞ որ դա իշխանության համար այնքան գեղեցիկ ցուցափեղկ է, «դրախտին» եւ «կոմունիզմին» չզիջող, եւ նույնիսկ ավելի գայթակղիչ, քանի որ, թվում է, նրան կարելի է հասնել դեռ սեփական կյանքի օրոք: Ո՛չ, մտածում են ժողովրդավարները. գաղափարը պետք է փրկել: Եւ հանկարծ «է՛վրիկա՛». «Ժողովրդավարություն՝ առանց ժողովրդավարների»: Այսինքն, առանց հենց այն մարդկանց, ովքեր պիտի գան իշխանության. եթե չլինեն նրանք, որքեր պիտի ընտրվեն, ուրեմն չեն կարող ընտրվել «ոչ այն մարդիկ»: Կեցցե՛ք, հայտնի սկզբունք է. կա մարդը՝ կա խնդիրը, չկա մարդը՝ չկա խնդիրը: Մինչեւ վերջերս սա համարվում էր ամբողջատիրական գաղափորախոսների սկզբունքը. հիրավի ծայրախեղությունները հանդիպում են:

Լավ, ենթադրենք: Իսկ ի՞նչ ենք դնելու ժողովրդավարների տեղում: Պարզվում է, հեղինակն այդ տեղում առաջակում է դնել օրենքի իշխանությունը: **«Օրենքի իշխանությունը նույնը չէ, ինչ ժողովրդավարությունը»**, հայտարարում է նա: Մի՞ թե: Իսկ մենք գիտեինք, թե նույն բանն է: Յիրավի, անմասնակելի են դեմոկրատները անհեթեթությունների մասին առօրեական ոճով խոսելիս: Ինչի՞ համար է դա առաջարկվում: **«Օրենքի իշխանությունը համաձայնություն է այն հանգամանքին, որ ոչ թե բարձրագույն իշխանության, այլ հասարակության կողմից տրված, հասարակությանն ընդունելի դարձած օրենքները կառավարում են բոլոր նրանց, ով իշխանության մաս է, նրանց, ով ընդդիմության մեջ է, նրանց, ով դուրս է իշխանության համար պայքարից»:**

Բայց ինչպե՞ս կարող են «օրենքները կառավարել»: Չէ՞ որ այսպես, թե այնպես «օրենսդիրները», «գործադիրները» որոշակի մարդիկ են, տվյալ դեպքում՝ ժողովրդավարներ: Թե՞ հեղինակը օրենքը դիտում է որպես մի ինչ-որ ուժ կամ եություն՝ չինական Դաոյի նմանությամբ: Մյուս կողմից, մի՞թե հեղինակը տեսել է մի պետություն, որում օրենք չի գործում: Մի՞թե օրենքներ չկային, օրինակ, ստալինյան Ռուսաստանում, կամ հիտլերյան Գերմանիայում: Յեղիականը պատասխանում է. «...**օրենքի իշխանությունը կանխող, այսպես կոչված, «օրենքների ընդունումը» բռնակալների առաջին գեղքն է:**» Ուրախացրե՛ց. ժողովրդավարների օրենքները լավն են, իսկ բռնակալներինը՝ վատ: Մերոնք՝ հետախույզներ են, իսկ նրանք՝ լրտեսներ: Իսկ ինչպե՞ս է որոշվելու, թե ո՞վ է բռնակալ եւ ո՞վ՝ ժողովրդավար, կամ ո՞ր օրենքներն են «հասարակությանն ընդունելի», եւ որո՞նք՝ ոչ: Չլինի՞ թե քվեատուփը: Մի՞ ծիծաղեցրեք. քվեարկության կազմակերպողը (որն այդ պահին, բնականաբար, վերահսկում է իրադրությունը, այլապես ի՞նչ քվեարկություն), որն այդ քվեարկության կազմակերպման համար զգալի ջանք ու փող է ծախսել, ստանում է իր համար անընդունելի արդյունք, մեծահոգաբար թողնում է ասպարեզը եւ հեռանում... Այդ ո՞ր հեթախոս էք տեսել նման բան: Եւ ի վերջո, չէ՞ որ հենց քվեատուփի նկատմամբ անվստահությունից էր հեղինակը սկսել իր դատողությունները:

Առհասարակ այս «լորդ»-ի հոդվածը թաքնված կամ բացահայտ զավեշտների մի շարան է:

Չավեշտական է նաեւ որպէս նախաբան բերված Կարլ Պոպերի (որը լուրջ փիլիսոփա է համարվում, քանի որ հայտնի սպեկուլյանտ Ջորջ Սորոսի ուսուցիչն է եղել) ժողովրդավարության «ճշգրիտ» ձեւակերպումը. **«Ժողովրդավարությունը... , իշխանության փոփոխությունն է՝ առանց արյունահեղության»:** Բանն այն է, որ արյունահեղությունից խուսափելու համար բոլորովին պարտադիր չէ, որ իշխանությունը պատկանի ժողովրդին, կամ, գոնե, փոխվի քվեատուփի օգնությամբ: Համենայն դեպս պատմությունը վկայում է, որ երբ գրեթէ ամենուրեք իշխել են ժառանգական միապետություններ իշխանության փոփոխությունը շատ հազվադեպ է կատարվել արյունահեղության ճանապարհով: Որպէս կանոն, իշխանափոխությունը կատարվել է չափազանց աննկատ. պարզապէս, մահացած կամ տկար հորը հետեւել է նրա որդին, կամ մեկ այլ ազգական: Արյուն թափվել է միայն հեղաշրջումների ժամանակ, սակայն հեղաշրջումներ եւ արյունահեղություններ եղել են (եւ լինում են) նաեւ այսպէս կոչված ժողովրդավարական երկրներում. բավական է հիշել «Ժողովրդավարական» Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմը կամ նույն այդ եւ այլ (ոչ պակաս «ժողովրդավարական») երկրների սպանված ղեկավարներին:

Իմիջիայլոց նկատենք նաեւ, որ ժողովրդավարության հանրընդունելի սահմանում գոյություն չունի: Պատճառը բացատրել է դեռեւս Օրուելը. «...նման սահմանման բոլոր փորձերը դեմ են առնում դիմադրության՝ բոլոր կողմերից... Յուրաքանչյուր վարչակարգի կողմնակիցներ այն ժողովրդավարություն են հռչակում, եւ վախենում են կորցնել այդ բառից օգտվելու իրավունքը, եթե նրան վերագրվի որեւէ մեկ նշանակություն»: Եւ իրոք, որոշ ուսումնասիրողներ առանձնացնում են ժողովրդավարության ավելի քան 550 ենթատեսակներ: Մինչդեռ ակնհայտ է, որ ժողովրդավարությունը չի նշանակում այլ բան, քան այն, ինչ ներդրված է այդ բառի մեջ, այն է՝ «ժողովրդի իշխանություն», եւ դրա էությունն այլ բան չէ, քան «մեծամասնության իշխանություն», որը կարող է իրագործվել միայն քվերակությամբ: Մնացածը շահարկումներ են: Պատճառն այն է, որ մեծամասնության իշխանություն լինելը դեռ չի երաշխավորում դրա նպաստավոր լինելը նույնիսկ այդ մեծամասնության համար: Դրանից բացի առաջ է գալիս փոքրամասնության իրավունքի հարցը, ու էլի շատ հարցեր, որոնց լուծումների տարբերակները տարբեր զուգորդմամբ կարող են տալ ե՛ւ 550 եւ նույնիսկ էլ ավելի մեծ թիվ:

Մեկ այլ զավեշտ: Պարզվում է, հեղինակի իդեալը իրագործված է... ո՞րտեղ, ի՞նչ եք կարծում. Թո՛ւրքիայում: **«...Օրենքի իշխանությունը Թուրքիայի ամենաբնորոշ գիծն է»** - պնդում է հեղինակը: Եւ սա ասվում է մի պետության մասին, որի համար զինվորական հեղաշրջումները ամենասովորական բանն են... Բա էլ ո՞ւր մնաց Պոպերը:

Հանուն արդարության, պետք է նշել, որ պրն. Դարենդորֆը զավեշտներ շարադրող միակ դեմոկրատը չէ: Դեռ հակառակը, դրանով զբաղվում են անխտիր բոլորը, ովքեր փորձում են փրկել ամբողջ աշխարհի աչքի առաջ խորտակվող դեմոկրատական գաղափարը: Եւ շատ պարզ պատճառով: Այն պահից, երբ բոլորի համար ակնհայտ դարձավ ժողովրդավարության ներքին հակասականությունը (իսկ դրան մեծապէս նպաստեց վերջին տասնամյակներում տեղեկատվական միջոցների սրընթաց զարգացումը), եւ որ դրա հաղթահարման փորձերը տանում են դեպի նոր ամբողջատիրությունների գոյացումը, ժողովրդավարությունը դադարեց պետության կազմակերպման եւ կառավարման ձեւ լինել, եւ վերածվեց ինքնանպատակ գաղափարախոսության, իսկ եթե իրերը կոչենք իրենց անունով, ապա՝ կրոնի: Իսկ կրոնական դրույթները անհնար է հիմնավորել տրամաբանական դատողություններով, դրանց կարելի է միայն հավատալ: Կամ՝ ոչ:

Ռուբեն Թարումյան

Յ.Գ. «Հայկական ժամանակ»-ը իրաժարվեց իրապարակել այս պատասխան հոդվածը: Հետաքրքիր է, թե ինչու: Երեւի պրն. Դարենդորֆի կարծիքը սրտներին շատ մոտ էին ընդունել: